



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ Վ Ա Յ Ո Ց Չ Ո Ր Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք. Եղեգնաձոր

N 62

«14».....07..... 2014թ.

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՆԵՐՄԱՐՁԱՅԻՆ ԵՐԹՈՒԴԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՍԱՆ ԱՎՏՈՍՈՒԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՐՑՈՒԹՅԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի N 762-Ն որոշմամբ հաստատված կարգի 49 և 50-րդ կետերի պահանջները՝ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգին համապատասխան

Մարզպետը ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել մրցութային հանձնաժողովի մրցույթի արդյունքների վերաբերյալ արձանագրությունը

2. Մրցույթում հաղթող ճանաչել.

2.1 Կեչուտի « ՊԱԶ տրանս » ՍՊԸ-ին հետևյալ երթուղիներում

- Եղեգնաձոր - Վայք
- Զերմուկ - Եղեգնաձոր
- Վայք - Զերմուկ

3. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ. Ասլանյանին՝ մրցույթում հաղթող ճանաչված « ՊԱԶ տրանս » ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր և ներկայացնել մարզպետի հաստատմանը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ. Ասլանյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրվելու պահից:



Է. ՂԱԶԱՐՅԱՆ